

յետոյ նոյն կարգաւ վերագործան ուսումնարանն և ապա հոգևորականաց դասը վայելուչ կերպով և փառաւոր հանդիսիւ ու պատշաճաւոր երգեցողութեամբ զիմեց նոյն տեղը հանդերձ ժողովրդական բազմութեամբ Այն տեղ խաչուուայ անկից յետ երբ այս օրհնուած ջուրը սրսկվումէր ժողովրդականաց և ուսումնարանի պատերի վերայ, այն ինչ միւս կողմը ներկայացնում էր մարդոյ շաչքի առաջ տեսարան միւ Գահլիճի մէջ տեղը բռնած էր հոգևորական դասը իւր գոյն զգոյն զգեստներով և փայլուն եկեղեցական զարդերով ձախ կողմը կանգնած էին կանայք իւրեանց ասիական շորերով, զնուահասակ կանայք ծածկուած էին իւրեանց սպիտակ և նախերով զարդարուած էհրամններով, որոց միայն երեսներն փոքր ինչ երևում էին և ոմանց ոտները ևս, որոնք հագել էին կիսակոշիկներ ի ցոյց մարդկան. իսկ պառաւ կանայք ծածկվումէին իւրեանց կապոյտ ու սպիտակ էհրամներով: Աջակողմը կանգնած էին մեր եւրոպական և Արաստանի զգեստներով զարդարուած տիկնայք, որոց երեսների վերայ ևս նշմարվումէին ծիծաղ և հնգնական ծաղը առ միւսները, որոնք երկնչկով և ահիւ կնայէին այս հանդէսին: Աջակողմեան և ձախակողմեան կանանց մէջ տեղը առանց էհրամի և շալիի կանգնած էին ուսումնարանի սաները, որոնց ձեռքերի վառած մոմերը նոյնպէս ծաղիկները աւելի փայլունութիւն և գեղեցկութիւն էին տալի նոցա զոյն զոյն եւրոպական և ասիական շորերի հետ այս տեսարանին. իսկ սոցա դէմ ու դէմ էին աստիճանաւորք, իշխաններ և թէ հասարակ ժողովուրդ:

Գեր. Փոխանորդի այս աւուր պատարագիչ լինելը աւելի գեղեցկութիւն և վսեմութիւն տուեց հանդէսին: Նախ՝ Գեր. Հայրը պատուական ատենարանութիւն արաւ և յետոյ աշակերտուհի Թ. Մամիկոնեանցը իւր ընկերակիցների կողմից կարդաց ճառ: Առաջին անգամն է, որ մեր քաղաքում օրիորդը ճակատը բաց ու սիրտառած այսքան բազմութեան առաջ համարձակուեցաւ չը ծածկել իւր սրտի ուրախութիւնը և նոյնպէս թարգման լինել իւր դասակիցների կողմից: Յետոյ կարդացուեցան երկու ճառ ևս. մինը կարդաց Պ. Յ. Գեղամեանը և միւսը ևս, որոց պատճէնները այս նկարագրու-

թեանս հետ ուղարկելով խնդրումեմ ի տիպ արձանացնել, եթէ արժան կը դատէ Ազգաշահ Խըմբազրութիւնդ:

**Գարեգին Գալապեանց**

8ին Յուլի-ի  
յԱխալ-ի-յ:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՊՐՈՑ**  
Ի ՀԻՆ ԽՐԻՄ

**Խճահար-Նէան Արարատ Ահապրոյ**

Հին Խրիմու մերազնէից ժողովրդական Գպրոցն որ թէ և ի սկզբանէ անդ բնակութեան Հայոց կար և կշարունակուէր, բայց ըստ օրինակի ազգային միւս Գպրոցաց շատ հոգեմաշ զժուարութեամբ զանազան շրջաններ ունեցել է. վասն որոյ Գըպրոցին զոյութիւնը խանգարեալ վիճակաւ խորին լուութեան մէջ մնացած էր մինչև ցայժմ. վասն զի ի բացմանէ անդ Գպրոցին մինչի 1868 ամն օժանդակութեամբ առաջաւորաց և մասնակցութեամբ ոմանց ժողովրդականաց քաղաքիս կառավարէր Հոգևոր հարց քահանայից և տիրացուաց տեղոյս տշխատութեամբն հին գաղափարաւ Սակայն իննևտասներորդ դարուս մէջ քաղաքիս Հայազգի փոքրիկ ժողովուրդը ևս արդէն բնականաբար ձանաչելով ուսման յարդն և մտածելով թէ ապագայից բարօրութեան անհրաժեշտ պայման է միայն ուսումն, որ մարդուս սրտին մէջ ճշմարիտ հայրենասիրութիւնը կարծարձէ, քաջալերացաւ և զխաւորապէս փոյթ ունեցաւ տեղոյս Գպրոցին վիճակն նորոգելու և բարեկարգ զրութեամբ պահելու, մանաւանդ յօրէ առաջնորդութեան ամենապատիւ Գարրիէլի սրբազան Եպիսկոպոսի Այվազեանց, որ ոչ սակաւ եղև Գպրոցիս կանոնաւոր ընթացից պատճառ: — Այս յատկացեալ պարտաւորութիւնքն ի գործ դնելու նպատակաւ ուրիշ աղբիւր չկարողացանք մտածել և զոյացնել, բայց եթէ զիմել առ քաղցր ակնածութիւն գերապատիւ Եղիազար Արքեպիսկոպոսի, նախորդի այժմեան Առաջնորդի վիճակիս, որ մեծ համակրութեամբ բարեհաճեցաւ ըստ իւրում ուսումնասէր և ազգա-

սէր զործունէութեան մեր բարենպատակ զգացմանցն համաձայնել, որով ըստ ինզորոյ Մերազնէից քաղաքիս լցոյց մեր բաղձանքն իւր ողորմած տնօրէնութեամբ խոհական կառավարութիւն տալու դպրոցիս կարգելով հինգ հոգաբարձուս, որք են Պարոնայք Պետրոս Թումանեան, Կարապետ Սերոբեան, Սարգիս Քոնստանտին և հանգուցեալ քաղաքապետն Յովհաննէս Մամբուսեան, որոց յորդորեց միանգամայն կարելի եղած ամէն ջանքն ու հնարք չինայել նոյն Գպրոցին տնտեսական և ուսումնական բարեոք յառաջադիմութեան ևս և արդիւնաւետութեան համար, Բայց ժողովրդեանս խեղճ զրուութեան և զբաւոց սակաւութեան առթիւ դարձեալ թերակատար մնաց մեր բաղձանքն իւր նպատակէն և Գպրոցն անհրաժեշտ զրամական կարօտութիւն ունեցաւ. ուստի մի տարւոյ չափ զկնի՝ դիմեցինք խոնարհ հարցուածով առ արհի Գերապատիւ թեմակալ Առաջ՝ որդ վիճակիս Տէր Գէորգ բարձր Արքայան Արքեպիսկոպոսն, որ ազգասիրական և ուսումնասէր հոգւով ուրախութիւն ցուցեալ իւր անձին, սիրով կատարեց մեր բարենպատակ ժողովրդեան ինզիրն այս Աստուածահաճոց զործոյն համար, և առանց ժամավաճառ լինելու խրոխուսեց զնոյն հոգաբարձուս կարելի միջոց տալով փափաքելի յառաջադիմութեան Բըպրոցիս, որպէս զի աղքատ ժողովրդեանս արդիւնաւոր օգնութիւն լինի. որով և անպատճի ուրախութեամբ լցան սիրոք մեր, երբ շնորհիւ նորին Գերապատուութեան Գպրոցիս նիւթական կարօտութիւնը փակուելով՝ կանոնաոր ընթացք առաւ տնտեսական և ուսումնական կառավարութիւնը. այնպէս որ կարողանալով նոյն Գպրոցին համար լաւ ուսուցիչք ունենալ յերեւան երանոցա արժանայարդ աշխատութեանց պտուղները յընթացս երկից ամաց. մանաւանդ զգալի ջանասիրութեամբ այժմեան ուսուցչին մերոյ Արքայ Կոնփաննոսի Պապիան և նորա օրնականի Պարոն Գէորգայ Կոմճեան, որոց ուսումնատուութեամբը բարեոքապէս շարունակուելով Գպրոցիս ընթացքը այս տարւոյ Յունիսի 25ին եղև տարեկան հարցաքննութեան հանդէսը ի ներկայութեան Գերապատուութեան սուրբ խաչ վանից քաղաքիս Տեառն Սարգսի վարդապետի Տէր Գասպարեան, Արժանապ.

Քահանայի տեղոյս Տեառն Արթանէսի Տօնայիլեան, Հոգաբարձուաց Գպրոցին և Հայազգի ժողովրդականաց քաղաքիս. ուրանօր գովելի յառաջադիմութեամբ յուսմունս հանդիսացան 40 աշակերտքն Գպրոցիս ամենայն նշանակեալ առարկայից միջ ըստ օրինակի բարեկարգ Գպրոցաց. ըստ որում մեծ խնդրութիւն պատճառեց թէ՛ ծնողաց և թէ՛ այլոց զգայուն սրտից, և կայ յայանի յոյս որ այսպիսի ջանասիրութեամբ ուսուցչաց տարուէ տարի լաւ ևս յառաջադիմութիւն երևի յօգուտ և ի խնդրութիւն բարենախանձ ազգիս:

Յաւելում և զայս զի նոյն հանգէսին ներկայացան նաև յիշեալ վարժապետին Արքայ Պապիեանի մօտ յիւրում բնակութեան մասնաւորապէս ուսանող պարկէշտասուն աշակերտուհիք, որք պարզ համարձակախօսութեամբ պատասխանելով իրենց դաս տրուած զանազան առարկաները, զոհացուցին ներկայ գտնուող ուսումնական անձանց սիրտերը, որով ամենուն սրտէն թռաւ խորին հառաչանք, որ ինչու մինչև յայժմ ժողովրդական Գպրոցիս նման բարեկարգ օրիորդաց Բըպրոց ևս չունիմք. մինչդեռ կփափաքեմք անշուշտ հաղորդել ուսումն նաև կանանց սեռին, որպէս զի ունենանք յապագային կրթեալ և բարեզգաց օրիորդներ ու բարոյական երջանկութիւն և եռանդուն նպատակ հաղորդող մայրեր. Աւստի աւելի փափաքեմք՝ բայց ոչ դեռ մեծայոյս, որ աղբիւր մի բացուի այս ազգասիրական ձեռնարկութիւնը անկատար չմնալու. մինչդեռ կտեսնեմք ներկայ դարուս մէջ՝ նորին Աստուածարեալ Հայրապետին Ազգիս Տ. Տ. Գէորգայ Բի ուսումնատե՛չ ջանքն ու բաղձանքն, որ ազգին բարեյական և նիւթական երջանկութիւն տալու համար ուսումնաբանաց թիւը հետզհետէ կըրազմացնէ իւր հայրախնամ հոգատարութեամբն. որոյ քաջախրութեամբ և այժմու Գերապատիւ Առաջնորդի վիճակիս ուսումնասէր և բարենպատակ զգացմունք յառաջադէմ շրջան տուաւ Գպրոցիս. որ իւր վիճակին ջերմեանն ժողովրդեան հետ զեղեցիկ համակրութեամբ կաջակցի ո՛չ միայն ազգիս ներկայ զրուութեան արդէն սոյն օրինակ հաստատեալ Գպրոցաց օգտաւետ առարկաներով և բարեկարգութեամբ յարատև զարգացնելով, այլ նաև նո-

բանոր Գպրոցներ հաստատելով երկուց սեռից, որ-  
պէս զի նորա ևս չզրկուին յուսման փափարէ:

Յուսամ որ ընդունելութիւն կունենայ յօ-  
գուածս պատուական «Արարատ», ամազոցոյ մի-  
ջոցաւ հրատարակուելու ի գիտութիւն սիրելի ազ-  
գայնոց:

Հոգաբարձու Վերջոյ Գլխաւոր

Ի 1874 թի 27 Յունիսի

ի Հին Խրատ

ԱՌՏԵՒՆ ԳՊՐՈՑ ԱՐԱՊԱՃԵԱՆՑ

Խոհարարութեան Արարատ ամազոցոյ.

Ձկնի մեր վերադարձին ի Մայր Աթոռոյն սրբոյ  
Էջմիածնի, ինչպէս որ խոստացած էինք Աղէք-  
սանյրապօլ քաղաքի մերազգայնոց ոմանց, և տե-  
ղական Յաջորդ Արժանապատիւ Գրիգոր Վար-  
դապետ Աղափիրեանցին, և Ազգային ուսումնա-  
րանի Տեսուչ Պ. Սարգիս Բէգնազարեանցին և  
ուրիշներուն այցելելնք կրկին անգամ ի 18-էն  
Յունիսի սոյն ամի, ց28-ն նոյն ամոյ, թէ Ազ-  
գային վարժարանին, թէ եղբարց Արապաճեանց  
ատանին Ուսումնարանին, որն որ կը գտնուի ընդ  
տեսութեամբ Գերազնիւ պօղապօլիտիկ Յով-  
հաննէս աղայի Տիրանեանց, և թէ հայ օրիոր-  
դաց նորարաց Գպրոցին. չերկարցընելով խօսքեր-  
նիս, և մեր զատողութիւնն այս գպրոցներու ներ-  
քին և արտաքին բարոյական և նիւթական բա-  
րեկարգութեանց և յառաջնացութեան մասին  
զատ զատ յօդուածներով հրատարակել տալու  
նպատակաւ, այս յօդուածիս միջով ունիմք ա-  
սել մի երկու կարճ խօսք միայն Արապաճեանցի  
գպրոցին. և երկու տող ալ նորա Տեսչին յատ-  
կութեան և բարեմասնութեանց վերայօք, իսկ  
ընդարձակն, և միւս վարժարանաց մասին հրա-  
պարակաւ խօսելիքներս կ'ընդունք ապագային:  
Այս ուսումնարանն բացուած է հրամանաւ Տե-  
ղական ուսումնական իշխանութեան և կշարու-  
նակուի 18 կրորդ յօդուածով հաստատուած կա-  
նոնադրութեամբ. սորա մէջ Հայերէն և Ռուսե-

րէն լեզուներէն զատ՝ ուրիշ լեզուագիտութիւն-  
ներ չկան. աշակերտաց թիւը կը հասնի ինչուան  
քառասունի. ուսուցիչներն են երկոքին եղբարք  
Պ. Աղէքսանդր և Սարգիս Արապաճեանցն. մի  
քանի անհատ անձանց վկայութեամբն, իրրե թէ  
սոցա հետեանօք պատրաստուած և առարկաներն  
աւարտած՝ աշակերտներէն ոմանք օրինաւոր հար-  
ցաքննութեամբ ինչպէս անցեալ տարին, նոյնպէս  
և այս տարի մտած են Տեղական դատական  
ուսումնարանին երրորդ դասատանը մէջ, և Գիմ-  
նազիւսի երկրորդը. իսկ եթէ ընդհանրապէս խօ-  
սելու ըլլամք, նա և բաւականին վարժութիւն կու-  
նենան վաճառականութեան վերաբերեալ գոր-  
ծերու մէջ: Վերոյիշատակեալ Տեսչի այսինքն է՝  
Մեծապատիւ Տիրանեանցէն ի զատ՝ ունի և ու-  
րիշ չորս բանիմաց Հոգաբարձուս, որոց առա-  
ջինն է Պ. Յովհաննէս Տ. Մատթէոսեան Բորո-  
վամեանց, որ և ըստ իմում հետաքրքրութեան  
տեղեկութիւն առնելով ի քաղաքակցեաց և թէ  
նոյն արգոյ ուսուցիչներէն, ճշտիւ գիտացի, որ նոյն  
գպրոցին բացման առաջին պատճառն նոյն ինքն  
Պ. Բորովամեանցն եղած է. քանի որ ազգային  
գպրատունէն իզատ՝ ուրիշ տեղ գպրոց բանալ  
տալն խիստ մեծ յանցանք, և շատ անսովորական  
գործ մը կը համարուի եղեր Աղէքսանդրապօլսե-  
ցոց համար. այս խօսքս ըստ մեծի մասին անոնց  
կասեմ, և իրաւապէս անոնց կը յատկանայ, ու-  
րոնց շատերուն սրտերնին դեռ ևս կապուած է  
ասիական մօլար հնութեան, և հին սրտերու հետ,  
և կոյր կամակորութեամբ հնոտի մտքերու վերա-  
յօք դեռ ինչուան այս օրս ցնոր և մոլոր կերպին  
ու կը մարգարեանան, սաստիկ և սաստիկ ձըն-  
չուած լինելով ասիական հոգու վայրենի և բար-  
բարոս կրթութեան և ազդեցութեան տակ. ուրե-  
մին, մեր սրտի շնորհակալութիւնը հրապարակի  
միջով տալերնէս զկնի յիշեալ պարոնին, կը յոր-  
դորեմք զինքն, որ ինչպէս առաջէն բնական բա-  
րոյական և նիւթական կերպով դէմ կանգնելով  
այնպիսի սնտոի և ազգամիտս նախապաշարմանց՝  
անկործան թողուց մեալ ցայսօր յիշեալ վարժա-  
րանն, ասկէ ետք ալ նմանապէս անհրաժարելի և  
սրբազան պարտք մը իրան համարելով՝ պարտա-  
ւոր է օրէ օր ուսման յառաջագիտութեան վերա-